ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMATS
Closed Joint-Stock Company
АРМАЭРОНАВИГАЦИЯ
закрытое акционерное общество
AB certification

№ 8.1- 497

<< 04 >> 10 2023

I.Gasparyan 33, Yerevan 0042, Republic of Armenia,
Tel. +374 10 292929 (366), e-mail: staff@armats.am

«ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ տնօրեն
պրն. Մ.Հովհաննիսյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Հայտնում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի փետրվարի 27-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.17 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի պահանջների Ձեր ընկերությունը ստանձնել էր փոխանջատիչների, անջատիչների, գերլարման սահմանափակիչների մատակարարման պարտավորություն և այն պետք է մատակարարվեր մինչև 2023թ.-ի մայիսի 31-ը, սակայն էականորեն խախտելով Պայմանագիրը՝ մինչ օրս չեք կատարել Ձեր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ուստի.

- համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- Համաձայն Պայմանագրի 2.1.7.1 կետի Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ծանուցում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն միակողմանի լուծում է 2023թ.-ի փետրվարի 27-ին կնքված թիվ 2.17 պայմանագիրը: Միաժամանակ խնդրում ենք Պայմանագրի և որակավորման ապահովման համար նախատեսված 37000 (երեսունյոթ հազար) ՀՀ դրամը 10 (տաս) օրվա ընթացքում փոխանցել Գնորդի Պայմանգրում նշված հաշվեհամարին:

Հարգանքներով՝

Ա.Գասպարյան
Գլխավոր տնօրեն